

կտրելու ըստ Սարգիս մեկնչի (70). այս ինքն ճիշդ ինչպէս այժմ կը գործածենք մեք զայն: Վիգուրու եգիպտական դանակի մը ձեւը կու տայ՝ յար եւ նման մեր արդի սեղանոյն արուեստական կտրոցաց (Բ, 1097):

Արեւմտեան հնախօսք, ինչպէս Սայլիոյ եւ Կ. Մ. նկատելով պատառաքաղին նուազ յիշատակութիւնն Յունաց եւ Հռովմայեցւոց մէջ, անոր գործածութիւնը բացառիկ բան մը կը կարծեն, եւ թէ անոնք հին ժամանակ ու միջին դարուն սովոր էին մատներով բռնել կերակուրը՝ նման ուրիշ արեւելեայց (Գար. Բ, 1424. Ա, 1274, '80): Լքսետր պատառաքաղն ու դանակն անձանօթ կը համարի նաեւ հրէական սեղանին վրայ (Վիգ. Ե, 1047): Տեսնելով Հայոց այժմեան սովորոյթը, մեք ալ նոյնպէս պիտի խորհէինք այդ երկու սպասուց մասին, եթէ չլինէին վերոյիշեալ ներքին վկայութիւնք: Իրաւ է՝ թէ ազոնք մեծամեծաց համար ըսուած են. բայց դիտելի է՝ որ դժուարաւ կրնար լինել այդպիսի հիմնական տարբերութիւն մ'ազնուականին ու ռամկին միջեւ: Եւ եթէ խորեն նացւոյն վկայութեան մէջ «ոսկին» առիթ կու տայ յիշելու զանոնք, չի հետեւիր՝ թէ նոյններն աւելի պարզ նիւթերէ չկային